

## 201. ՀԼԻՎՈՒՐԸ ՎԱՃԱՌԻՆ ԹԼԱՆՈՒՄ Ա, ՊԵՏ ԹՈՂՈՒՄ

*Մին օր Ալլահվերդի վաճառին ասում ա.—Շահ-Աբբասն գործերը վրեր լավ ա գլխնում, ինձանով աւ նա առանց ինձ վրեչ մին պեն կարալ չի անե։ Մարթիկ ըն ինում, վրեր էտ խոսկը հրացընում ըն Շահ-Աբբասն։ Սա էլ Ալլահվերդի վաճառին կանչում ա, ասում.—Պադրասովն, շորերըտ փոխե, էքյունե գլիննական ընք շոռ կլանք։ Վաճառը գլիննում ա շորերը փոխում, Շահ-Աբբասն էլ դերվիշու շորեր ա կլենում, մին քանի օրիշ վաղիրներ էլ եր օնում, գլիննում երգլիրը շոռ կլալ։ Մարեռն ա ինում։ Վրեր հանում ըն մին հեռու շեն, տրեանում ըն մին հլիվուր մարթ ուրանց հրյաթումը նստած, շատ մրսելան ծրոքերեն փչում աւ։ Մուտանում ըն պարյոր տամ, Շահ-Աբբասը տրան հրացընում ա, թա.—Կրրեցալ չը՞ս ինեը բաժանես տասներկուսի։ Հլիվուրն ասում ա.—Երեսունվերկուսը թոզալ չի, վրեր բաժանեմ։ Շահ-Աբբասը նոնան հրացընում ա.—Մոտե յը՞ս, թե հեռու։ Հլիվուրն ասում ա.—Էն ըմ լափ ղրաղեն, վրեր մին թիթեվ քամի փչի, կինգլիմ մեչը։ Մինգլել հրացընում ա.—Էրկու ե՞ս, թե իրեք։ Հլիվուրն ասում ա.—Արտեն անց ըմ կրցալ իրեքին։ Տրանա նոը Շահ-Աբբասը հրացընում ա.—Վրեր մին զազ զարկեմ, կրկարե՞ս թեփռես։ Հլիվուրն ասում ա.—Էտ իմ փեշակրս ա, մինակ թե քյոքը զարկե։

Տեղան նոտ ըն տանանում, գլիննում պալատը։ Շահ-Աբբասը սուտրսոտ հիվրընգանում ա, Ալլահվերդի վաճառին կանչում կոշտը,

ասում թա կըկարես քյինիս էն մարթին խոսկերքը գյիդես հինչ ա ասալ, ես քյինեմ ըմ կյումումը ծիյանցը տակը թիմիզցնեմ, տու կյամ ըս իմ տըեղըս, թա կարեսվուչ, տու վրա քյիննական ծիյանցը տակը թիմզցնես։ Վազիրը ճարը կտրած, մին խուրջին վրեսկն յա օսավը քցում, էս գնում ուրեն շուրերավը քյինեմ էն հլիվուրեն քթենում, վրեսկեն տամ ուրան, ասում.—Ա՛յ հլիվուր, էլ էն տեղը չի, ասե տրեսնամ էն օրը վրեր մին քանի մարթ եկալ ըն կոշտըտ, էն գերվիշը վրեր քեզ մին քանի պեն ա հըրցըրալ, տու նրան հի՞նչ ըս ասալ։ Հլիվուրը թա էտ վրեսկավը ես կարալ չեմ ասեմ, պիտի քու տաղ հարատութունըտ, իլեծ-շիլեծըտ լոխ ինձյիրա կյիրիլ տաս, վրեր ասեմ։ էլ էն տեղը չի, վազիրը քյինեմ ա ուրեն հարատությունը, իլեծ-շիլեծը լոխ հլիվուրեն յիրա հըստադել տամ, կյամ հլիվուրեն կոշտը, թոխտը տամ ուրան, թա գե ասե։ Հլիվուրը թա լոխ ինձյիրա հաստատել չըս տուվալ, ամենամեծ պենը մնացալ ա։ Վազիրը թա հի՞նչը։ Հլիվուրն ասում ա՝ կենգյըտ։ Վազիրն էլ ասում ա.—Գա տա հունց կինի՞, իմ կենգյըս ես հո՞ւնց քեզ տամ։ Հլիվուրը թա՝ տու վրա գյուղում, ես քեզ ըստիբում չըմ, տու վրել ինձ մի ըստիբիլ։ Վազիրը ճարը կտրած, կըենգյն էլ ա հլիվուրեն յիրա հըստատել տամ, տրանա նոր հլիվուրը թա քյինինքյ Շահ-Աբբասեն կոշտը, ասեմ։ Վազիրը թա՝ քյինինքյ։

Քյինում ըն Շահ-Աբբասեն պալատը։ Շահ-Աբբասն իրան նազիր-վազիրին հըվաքում ա, նստում ըն, անքուկ օնում։ Հլիվուրն ասում ա.—Իմ կոշտըս եկած էն գերվիշը Շահ-Աբբասն ա իլալ, էն մինը՝ Ալլահվերդի վազիրը, էն մընացածն էլ էտհինչ, էնհինչ վազիրնեն։ Շահ-Աբբասը վրեր հըրցըրալ ա, թա կըրեցալ չը՞ս ինենը բաժանես տասներկուսի, ուզեցալ ա ասե, կըրեցալ չը՞ս կյարունքը, ամառը, աշունքը հունց ըշխադես, վրեր ծմըեռնը փադու յա օրիշ պենու պըկըսոթուն չի քաշես, մրսեսվուչ ծրոքերետ փիշես, ես էլ ասալ ըմ երեսուներկուսը թուղեցալ չի, վրեր բաժանեմ, ուզեցալ ըմ ասեմ հինչ ըշխադալ ըմ, ըրես կերալ ըմ, հերիքյ չի ըրալ։ Վրեր հըրցըրալ ա՝ մոտե յը՞ս, թա հեռու, ուզեցալ ա ասե մըռնելան մուտացալ ը՞ս, թա հանչն էրկան ըս ըպրըլական, ես էլ ասալ ըմ էն ըմ լաի ղրաղեն, մին թուլ քամե փշի, կինգյիմ մեշը, տրանավ ես էլ իրան պատասխան ըմ տուվալ, վրեր էն ըմ մըռնելա լաի մոտե, մեհենգ վրեր հըրցըրալ ա՝ երկու ես, թա՞ իրեք, տրանավ էլ ուզեցալ ա գյիդա՝ ես մահկավ ըմ շոտ կյա՞մ, թա առանց մահկ, երկու վրեննանե յը՞մ, թա իրեք։ Ես էլ ասալ ըմ

անց ըմ կացալ երեքին՝ ըսկըսալ ըմ մհակավ շոռ կյանը։ Ետեան էլ, վըեր հըրցըրալ ա, թա մին զալ զարկեմ, կըկարե՞ս թեփռես, ուզեցալ ա ասե, վըեր մին խըելքը պակաս մարթ զարկեմ, կըկարե՞ս հինչ օնե, օնեվուչ, լոխ ծրեռքան խլիս, պեց թոզես։ Ես էլ ասալ ըմ զարկե, մենակ մխըրե քյոք ինի՝ ուզեցալ ըմ ասեմ, վըեր հարուատ ինի։ Էն ա զարկալ ա, էտ զալն էլ Ալլահվերդի վանդիրն ա, իլանի-չիլանը, մինչև կնեգյն էլ ծրեռքան խլալ ըմ, թեփռալ, պեց թոզալ։